

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պոչխարիոյ համար	12 փր.
արեկան վեցամսեայ	7 "
Արսասանիանի համար	15 փր.
սարեկան վեցամսեայ	8 "
Աւերիկայի համար	3 սյ.
սարեկան վեցամսեայ	1.50 "

Մանուգրան տղր ու սուգին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Իրեքին ու ելի սեղաններու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառեայի համար ձեռք 10 սանթիմ է

ՉԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱՆԱՍՏԱՆԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНЫЕ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նախկին և գրամ ղրկիչ խմբագրության հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржунъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պոչխարիոյ համար ձեռք

15 ՄԱՆԹԻՄ Արսասանիանի համար ձեռք

20 ՄԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեմ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԵՆԷ ԵՐԱՇ. ԽՈՒՆՈՐԵԱՆ ՍՕՑԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան իրեն դիմել: Չար-Պորիս փողոց Վառնա

ՆԱՍԱԿԱՍՈՒՓ

Կարա Սլիվին.—Պ. Սարգիս Վարդանեան, Ձեր ցոյց տուած հասցէին ուղարկուած բոլոր թերթերը փութեմ ետ վերադարձուած են, թերթերը դադարեցուցած ենք մինչեւ ձեր կանոնաւոր հասցէ տալը:

ՄԵՐ ՉԸ ՎՃԱՐՈՂ ԲԱՏՆԵԿԻՆԵՐԸ կամ վճարեն իրենց պարտքերը եւ կամ դադարին թերթ ստանալէ:

ԻԶՄԻՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պօլտոյ խայտառակ կատակերգութենէն վերջը, որուն համը կերեւայ թէ Սուլթանին բերանը մնաց—քանի որ գատապարտուած ժօրիսը, հակառակ իր եւրոպացիի հանգամանքին, դեռ մինչեւ այսօր բանաւ կը մնայ—Իզմիրի մէջն է որ կը կարգուի Երկրորդ վարագոյրը:

Այս անգամ քանի մը տասնեակ թրքահայատակ հայեր են, որ թուրք գազանային անարգարութեան ճիրաններուն մատնուած են: Բառասունի չափ կտրիճ, երիտասարդ, հազուագիւտ ու ընտրեալ հայեր, ճշմարիտ ու թանկագին զաւակները իրենց բազմաշարչար ու ըմբոստ ազգին, սոյլթանական լիբր ու անարգ դատաւճռին զոհ պիտի երթան քիչ ժամանակէն...

Իզմիրէն մեզի զրկուած տեղական թուրք պաշտօնաթերթ «Ահէնկի» մէջ, այդ գատապարտութեան արձանագրութիւնները կարդալով, կատաղութիւն ու զգուանք միայն կը զգանք այն

չնականութեան, աներեսութեան, ապերասան ոճրագործութեան հանդէպ, որուն կարող է թուրք բէթմը. Սուտը, զրպարտութիւնը, խեղաթիւրումը, իբր խոստովանութիւններ այդ վեհ զոհերուն վերագրուած են, որոնց միակ յանցանքը եղած է բողոքել անարգարութեան, հալածանքներու, հարստահարութեան ու թալաններու գէժ, և ընկերական դաշինքի անկիւնաքարը եղող կեանքի ու ինչքի ապահովութիւնը պահանջել: Գժուար չէ կահել թէ հրապարակային գատապարտութիւնը, որուն սակայն ոչ մէկ հայու թոյլտուութիւն չէ եղած ներկայ գտնուիլ, պարզապէս վարնոց ձեւակերպութիւն մըն է (՝) Իտալիայի արքայի օրը տրուած է արդէն, երբ այդ զոհերը ճիւղիկն ափը անցան:

Արդեօք, դարձեալ հայ ազատագրութեան կռուի մարտիրոսապատմը այդ փոհ ու անձնուրաց հոգիներն ալ պիտի արձանագրէ իր էջերուն մէջ: Զի՞ պիտի կրնանք, մեր բոլոր ճիւղերով, ազատել զանոնք անգութ գատապարտ մը զօրժողութենէն: Ոչ մէկ պատմութեան շահերը այս շատ մարդասիրական պարտականութեան կատարումովը չեն վտանգուիր ու կ'երկարուի. թէ մեր հայասէր բարեկամները իրենց իշխանութեան ամենէն փայլուն օրերուն մէջ իսկ պիտի չի կրնան, կամ աւելի ճիշդ պիտի չուզեն անարգ գատապարտութեան մը անիրաւ զոհերուն պաշտպան կանգնիլ ու անոնց կորուստը արգիլել, ալ թքենք այդ հայասիրութեան վրայ ու յաւիտենապէս մոռնանք անոնց գոյութիւնը, որ այսքան ժամանակ զուր յոյսերով օրօրուելու և մեր ուժերը ջլատեցնելու այսպէս թէ այնպէս պատճառը եղաւ:

ՇԱՅՄ

(՝)—Իզմիրէն ոեզի կը գրեն թէ բացի փաստաբաններէն եւ պաշտօնական անձնաւորութիւններէ ոչ ոքի թու չէ տրուած ներկայ գտնուիլ մասնաւորապէս հայերու:

ՍԵՆԱԿԵՑՆԵՐՈՒՄ

Մեր մայրերն ու մամիկները ապաշխարհութեան սա օրերուն, իրենց անանձնասեւեակները քաջուած ամբողջովին քրիստոնէական խորհրդածութիւններու մէջ կը կողմէին, հոգեւին վերամբարձումներու անձնատուր, կատարելապէս հեռու մնալով քառասնորեայ այդ ապաշաւի ու ինքնազնէութեան օրերուն միջոցին:

Մենք, դարձեալ ներկայացուցիչներս եւրոպայի թոռներուն, ազատամիտ գաղափարներով տոգորուած՝ բնականաբար հեղանկան արհամարհանքով մը միայն պիտի լսենք մեր բարեմիտ մամիկներուն այդ երանելի սովորութիւնները Մեզի համար, Աստուծոյ 365 օրերը որոնք յաւիտենապէս ու պարբերական յաջորդութեամբ իրարու կը հետեւին, իրարմէ ո եւ է զանազանութիւն չունին: Ու մենք որ հաւասարութեան պիտոյններ ենք մեր իրաւունքները յափշտակող այդ մարդոց դէմ, անշուշտ չպիտի ուզենք բացառիկ կարեւորութիւն մը տալ քառասնորեայ սեւեղութեան մը այս շրջանին: Ու այս պատճառաւ ալ ապաշխարութիւն ու ապաշաւ, աշխատութիւն ու զրկանք գոյութիւն չունին մեզի համար:

Բայց ես պիտի փափագէի որ գոնէ այս աւագ շարթուան միջոցին շեղում մը ընէին իմ յոյրերս ժամանակակից բարոյներու կանոնագրէն ու ինձի հետ այս մեծ շարժումը իրենց տայրեր խորհրդածութիւններու, որոնք կրօնական խնդիրներու չի պատկանելով հանդերձ, չեն դադար խիտ շահեկան ըլլալէ:

Արդարեւ խնդիրը շատ կենսական է, ու ամենալուրջ ուշադրութեան արժանի: Ես վաղուց մտադրած էի իմ ջոյրերու հրաւերը մը ուղղել այն խնդրի մասին, որ շարունակ միտքս կը զբաղեցնէր, առանց լուծում ստանալու: Ու քրիստոնէական ինքնամոտիւմի այս օրերուն, փոխանակ Սաղմոս քաղելու, այս նիւթն էր որ զիս զբաղեցուց, ու այսօր վերջապէս ժամանակը եկած կը համարիմ հրապարակաւ ձեր ուշադրութեան առարկայ ընելու զայն, ո՞վ սիրուն ջոյրերս:

Հարցը նոր չէ, բայց կարեւոր է, ըսեմ վերջապէս. մեր սեռին դաստիարակութեան հարցն է.—Իրաւունք տուի՛ք, այնպէս չէ՞, այսքան ատեն մտահոգութեան ենթարկուած ըլլալու համար: Արեւելեան խնդրին չափ հին է հայ աղջիկներու դաստի-

արակութեան խնդրին մեր մէջ յուշադրութիւն. եւ ինչպէս կերեւայ, արեւելեան խնդրին հետ միայն պիտի լուծուի, ու մենչեւ որ Հայաստան մը չունենանք, կրթուած հայ օրիորդներու սերունդը մը չի պիտի ունենանք:

Այլեւրեւ մէջ մը դաժուցէք սա շորս կողմերինդ, արդեօք զգուանք չէ՞ք զգար, երբ կը տեսնէք քանի մը մեծ աղա ու պօշ զլուխ հոգաբարձուներ կամ կաղականներ որոնք հրամաններ կարճակեն մեր սեռին դաստիարակութեան վերաբերմամբ. կամ չէ՞ք արգահատիր սա պատուելիներուն վրայ, որոնք յաւակնութիւն ունին ամեն բանի խելք հասցնելու ու մեր սեռին գատապարակութեան ծրագրիները կը պատրաստեն ու գործադրելու հոգն ալ վըրանին կանոն, աւա՛ղ, ի մեծ զրգախտութիւն հայ դեռափթիթ փափուկ սեռին:

Ա՛խ, մանաւանդ այս վերջին տիւմարները, հազար անգամ նախամեծար պիտի համարէի բոլորովին անուս ու տգէտ միւս քան այդ անձարակ ու ձախաւել վարժապետ ըսուած խեղճերուն ձեռքով դաստիարակուիլ, ի՞նչ մեղքս պահեմ. բնաւ չեմ ախորժիր այդ մարդերէն, ո՞րը կուզէ թող ըլլայ մանաւանդ որ վարժուհիներուն ալ չեն հաւելիր անոնցմէ շատերը: Ըսել չեմ ուզեր սակայն թէ անոնք գէշ կամ անպէտ մարդիկ են. քաւ լիցի՞, Գուցէ աշխարհի ամենալու մարդիկ ըլլան. բայց ամէն պարագայի մէջ, իգական սեռը դաստիարակելու ու ընդունակութիւն եւ ոչ ալ պատրաստութիւն ունին անոնք, ու ճիշտ այդ պատճառաւ, անոնց ձեռքին մէջ մնացող հայ աղջիկները, իրենց ապագայ կոչումին բոլորովին անպատրաստ էակներ կ'ըլլան:

Պէտք է որ միջոցներ խորհինք մեր կրթական գործը մեր ձեռքը անցնելու համար: ու թօթափենք մեզի չի հասկցող ինքնակոչ խնամակալներու անցուցած երկաթէ շղթան: Ես կը կարծեմ որ ասոր ամենէն կարճ ճամբան է մեր ձեռքն առնել մեր սեռին կրթութեան յատուկ վարժարանները, որ քաղաքին մէջ որ կայ: Այո, ես կառաջարկեմ որ, հայ կանանց մեծ ընկերութիւն մը կազմենք, Պօլտոյ երեսնի շրջանակէն սիկնանց՝ ընկերութեան նման, եւ հոգաբարձուներու հետ համաձայնելով՝ աղջկանց վարժարաններու կրթական ու նիւթական հոգածութիւնը մեր վրայ առնենք: Ասիկա անկարելի բան մը չէ, այլ ընդհակառակը

Մ. Խ.

չատ գործնական եւ օգտակար :
Կուզէի մանրամասնել առաջարկիս
չարժաւորներն ու անոր կարելի օգ-
տակարութիւնը . բայց գրիչս կ'ընտ
ու անգոր է : Ես ալ զոհն եմ այն ան-
կերպարան վիճակին , որուն մաս
նուած է մեր սեռի գաստիարակու-
թիւնը , ու այսօր , առանց բաւական
նաչափ տօնմանի ու լեզուական պա-
շար ունենալու , ստիպուած եմ օտար
կրթական հաստատութիւններու դրո-
ները ափ առնել մտաւոր սնունդը ք-
տանալու համար : Անտանելի է սա-
կայն մեր այս կրթական վիճակը .
փութանք վերջ մը տալ անոր :
Ուրուական

ԱՐՈՒԱՍՈՒՆԵՐ

Չարամիտ սուրհանդակ մը այս օ-
րերս տրամադրութեանս ներքեւ զը-
րուա չորս տարբեր հայերէն թերթերը .
— մէկը՝ Մարտիրոսի միջնադարեան
«Արմենիան» , ուրիշ մը՝ Նիւ-Յորքի
«Ե» . Հայաստանը , երրորդ մը՝ Պոս-
թօնի «Հայրենիք» եւ չորրորդը՝ ա-
նոր հայրենակից «Ձայն» :
Այս թերթերուն մէջ ինձ համար
աչքի ինկնող կէտը նկարագրութիւնն
էր հանդէսի մը՝ որ տեղի ունեցաւ
Լոնտոն , հայկական Մոսկուայի առ-
թիւ եւ որուն ինչ ըլլալը գիտէի
արդէն շատ տարբեր ու արժանահա-
ւատ աղբիւրներէ :

Շուարած մնացի , Ինչ էր պատ-
ճառը որ կարգացածներու մէջ գո-
վասանքէ , գրութեանքէ եւ խանդա-
վառն փառաբանութենէ զատ ուրիշ
բան չկար . կուսակցի անմիջապէս թէ
միտիքական բան մը կայ անշուշտ ,
մանաւանդ որ այդ «յոզուածներն»
ու «թղթակցութիւնները» ստորագ-
րողներուն լանուները այնքան ալ
վստահելի չէին հնչելու ակնջիւս եւ
անոնց ով եւ ինչպիսիներ ըլլալուն
ձանօթ էի տարիններ առաջ :

Ճիշդ է որ Լոնտոնի Միացեալ Ըն-
կերութիւնը Մոսկուայի առթիւ կը
սարքէ հանդէս մը , որուն ներկայ
կըլլան 100 անդամներ Վրայ 20-
30 հայ միայն , ինչպէս . — Հոս Գը
րիստոսի մէկ մասալին վերակրկնու-
մը տեղի կուսենայ . Գործադիր յանձ-
նախուժի անդամները , անսնելով որ
տոմսակները չեն ձախուր «ընտ-

րհանրուին» , կը տանին , կը բաժնեն
իրենց ֆոտոլիթայի ազդիկներուն ու
տղոց եւ այսպէսով սրահը կը խոր-
նուի 120-130ի չափ բազմութիւնով
մը :

Հանդէսը կըլլայ ողորմելիութեան
ցուցադրանք մը . սակայն գործադիր
ժողովի անգամները խելքերին կը
խոցեն իրենց այս «հսկայ եւ ան-
զուգական» յայտնութիւնէն եւ ակըն-
կառոյց կըստանն տիեզերական մա-
մուլին մէջ իրենց անուան ու գոր-
ծունէութեան ուժըլամին , որովհետեւ
մեր երանելի պարոնները , հոգատա-
րութիւնը կուսենան անգլիացի քա-
նի մը բիւրոգրները գտնել եւ հոն
նստեցնելու , այն ծիծաղելի համո-
զումով որ յաջորդ օրը Լոնտոնի մա-
մուլը պիտի թնդայ Մ . Ընկերու-
թեան հանդէսին արձագանգով . .
Յուստիարութիւն , ահոելի ու սքմ.
քեցուցիչ յուսախաբութիւն . . . Անգ-
լիացի թղթակցները բաւականաչափ
ու զեղ ունին՝ որպէսզի այդպիսի զէմ-
զէկութիւններով սխնակ մտտեն :
Ուստի եւ , այս խորտակուած երազ-
ներուն ցնցումէն սահմակած՝ մեր
«գործադիր յանձնախումբը» , կամ
աւելի լաւ է ըսել , Միացեալ Ընկե-
րութեան վարչական անդամները ,
կորոշեն որ եթէ մէկը չը փառաբա-
նեց իրենց սարքած այս գերընտիր
հանդէսը , գոնէ իրենք գովասանեն
եւ կոստիւն գործի :

Թուով 5 է վարչ . անդամներուն
խումբը , իսկ ընկերութեան ընդհա-
նուր անդամաց թիւը՝ 8—9 , կամ
ատոր մտ բան մը :

Մէկը՝ իբրեւ սեփական թղթա-
կից , չը նայելով որ ինք «քարտու-
ղարն» է ընկերութեան , «գորս գու-
պատուիրեցեր» կակսի աշխուհան
նկարագրութիւն մը Պոսթօնի «Ե»-ին ,
մրտտելով իր ծիծառ գրչով տեղացի
հայեր եւս : Այս երանելի քարտու-
ղար այն խպլիկն է որ ասկէ
քանի մը ամիսներ առաջ երկիրքով
եւ երկրով կերպնուր թէ՛ եթէ հեղ
մըն ալ Միացեալի սրահէն ներս
մտնէ , «չունէնց ցած ըլլայ» . բայց
այսօր կերեւայ թէ՛ այդքան ցած ըլ-
լալու վտանգը առաջուր կոխելով ,
որպէս վարչական անդամ , խելագա-
տակին ըրմանգակութիւնը զուրս է
թափել՝ իրեններուն իսկ սարքած
հանդէսը իր գրչով երգելու , Ահա
թէ ինչպիսի հոյակապ տեպար . Աչքը

լոյս Այր-Վէլին ,
Երկրորդը կը տեսնուի Նիւ Յոր-
քի «Ե» . Հոն մէջ՝ ուրիշ տիրացուէ
մը , որ եթէ անուէնց զատ ուրիշ
բառ մը գրէ ըսեմ՝ մատերս կը ցաւի
կը պատասխանէ : Աս ալ իրենց գան-
ձապահն է : Ահա՛ երկրորդը «թղթա-
կիցներուն» .

Երրորդը կը կայգանք պարոն
Փորթուգալեանի «բացում» (ու-
երբէք չը գոցուիր) բաժանորդագ-
րութեան» քովը , գրուած ուրիշ՝
խպլիկէ մը՝ որ «նախագահն» է , եւ
բաւաւանքին սփիւք պր . Լաուրըր
այնքան համարում չունի իր դիրքին
որքան այս անբանատիպ եղկելին իր
պաշտօնին , եւ այդ սխտէմով ալ
իր հիւլէական ոչնչութիւնը կուզէ
մեծցնել աշխուհոց առջեւ՝ որպէս
«նախագահ Լոնտոնի հայոց Միաց-
Ընկերութեան» , որուն անգամները ,
ինչպէս ըսի , վարչականով միասին ,
կը հասնին 8—9ի . Այս ալ երրորդն
է :

Հիմա կուգայ չորրորդը՝ «Ձայնին»
մէջ . — Եղբայրը Փորթուգալեանի
թղթակցին եւ գրագրականագետը րն-
կերութեան , ճշմարտը խօսելով՝
այս հոթնութեան ցաւագարին վրայ
խօսելն իսկ աւելորդ բան էր . սա-
կայն , մղում պարագաներէ , պար-
տաւոր եմ քանի մը խօսք ընել՝ այդ
բոլոր աթոռամոններուն ցաւագին
էութիւնը պարզելու համար :

Այս պարոնիկն ալ նման
իր քարտուղար պարոնիկ պաշտօնակ-
ցին . ելեր թղթակցութիւնը ըրեր է ,
հիւանդ ու պարագ գանկին վերջին
միացորդները թափելով — թէ՛ ան-
զէսին յաջողութիւնը եղած է ուր-
թան թիսան , թէ պարոն բանա-
խօսներու — Դոպրաշեանի . րրօ՞՞ .
Թուճաեանի եւ այլնի ճառերը ան
հատուած ծափելով ընդհատուեր են ,
եւ զեռ ինչնր . . . Մոտցում չէ նաեւ
իրենց սիրելի «մայրիկը» . Ինչ . .
մոռնալ . . . յաջորդ օրը զոնչն զուրս
կընէր եւ իրերը տղայ չէր ընդու
նրի՛ եթէ «Այրի տիկին Ռաֆֆին»
չը յիշուէր :

Եւ , երեւակայեցէք , այս պարոնի-
կը , այն աստիճան յառաջ կերթայ՝
հոչակելով գործերին — ներկայացու-
ցած «պիտանին» — անիմանալի յա-
ջողութիւն մը , կը յստանէ նաեւ ա-
տոր անթերի ներկայացում մը ըլ-
լալը՝ գեղարուեստական տեսակէտով

(սիք) , եւ ամէն գովասանքի ու քա-
չալերութեան արժանի կը գտնէ
վարչութեան անդամները , այսինքն
ինքզինքն ու իրեն պաճանախ-
ն եր . . .

Ո՞վ մնափառութիւն , մարդը ա-
պուշութեան այս ո՞ր աստիճանին կը
հասցնես . . .

Ահա մարդիկ ձեզի՛ որ հանդէս
կընեն եւ իրենց ձեռքով չորս կողմ
«թղթակցութիւններ» կը տեղացնեն՝
իրենց սեփական գործունէութիւնը
փառակերտելու . Եթէ իրապէս լաւ
բան մըն էր , ինչպէս թոյլ չը տուին
որ ուրիշը խօսէր եւ ուրիշը գատէր
գործերին , փոխանակ իրենք զի-
րենք գովաբանելու . Այդ վարժու-
քը արդէն ինքնին բաւական չէ՞
ցուցնելու՝ թէ ինչպիսի գիտարթ
պատկերի առջեւ կը գտնուինք . Ի՞նչ
ինչպիսի ողորմելի ձգտներն են . .
Այս կէտը լուսարանէս ի վեր՝ չեմ
կարող զսպել միանգամայն վրաս ե-
կող զարմանքը . ծիծաղն ու կարեկ-
ցութիւնը . Գորտին ու երկու ծիծեռ-
նակներուն պատմութիւնը կարթն-
նայ մտքիս մէջ եւ կը ցաւիմ կար-
գահատիմ , կը խղճամ վրանին .

Փանի որ ստեղծուեր էք աննայն
մնալու , ալ ի՞նչ հարկ տխտանի ես
րուտիներ առնել , ու այդ իբրքին
մէջ՝ դառնալ ծիծաղի եւ արգահա-
տանքի հարուստ պաշար . . .

Վաղ անցէ՛ք այդ փառքէն . փ ու ը ր
թ ի ն կ ու . . .

ՅԱՆՍՕՐ

ՇՐՋԱԲԵՐՈՒԿԱՆ

Ուսուցչ . Մարմին
Ազգ . Երկուս վարժարանի
Ռուստու . 25 Մարտ 1906
Թիւ 84

Պաշտօնակիցներ ,
Շատնց ի վեր խնդրոյ տակ
եղած է կազմել Պուլկարիոյ մէջ
Ուսուցչական Միութիւն մը՝ նպա-
տակ ունենալով
1. — Իր իսկ վանքերով ձեռք
բերել ուսուցչէն անզգալիօրէն
խլուած կարգ մը իրաւունքներ ,
2. — Ապահովել ուսուցիչնե-
րուն և ուսուցչու հիններուն ներ-

ԱՊՊԵ ԺԻԿ

ՄԱՍ Բ
(Հատուածներ)

Սրբատու փը սեղանին վրայ դրաւ ,
ներկաներուն վրայ օրհնեալ շուր
սրակեց , ու ըսաւ .
— Տէր ողորմես :
Ժամկոչը պատասխանեց .
— Եւ ընդ հոգոյք քում :
Արքան խաչը առաւ ու մահամբ-
ձին շրթունքներուն մօտեցուց .
բայց այդ շրթունքները անշարժ
մնացին Աստուծոյ հպումէն : Հիւան-
դը այլեւս չէր զգար , չէր տեսներ ու
չէր լսեր : Իր աչքերը անհունու-
թեան կը նայէին արդէն : Արքան
հիւանդին վրայ հակեցաւ մեղմօրէն .
տկար բայց գրգռող չունջ մը իյնող
ծաղկին մը դերագոյն հեւքին նման ,
իր սեղմ ակաւներէն դուրս թռաւ :
Ու աղջիկը մահուան տփքոյն գիմա-

կին տակ , երիտասարդական կեր-
պարանք մը ու յուզիչ գեղեցկու-
թիւն մը կը պահէր :

— Աստուած է որ քեզի կուգայ ,
ըսաւ հօրեղբայրս , չէ՞ք լսեր :
Աղջիկը շարժում մը իսկ չըրաւ :
Արքան ներկաներուն դարձաւ ,
դէպի ծնրադիր կիներուն ու ոտքի
կանգնած մարդոց .
— Կը մտնի կոր , ըսաւ :

Ու սեղանին վրայ փայլող սրբա-
տու փը ցուցնելով , ու արծաթեայ
տուփերու մէջ ամփոփուած սուրբ
իւղերը , աւելցուց .
— Ալ ի՞նչ պէտք կայ ասոնց .
հանգիստ ձգենք զինքը : Ու զուր
զայն կը սիրէք աղօթեցէք իրեն հա-
մար :

Անկողնին մօտ ծնրադրեց , և յուզ-
ուած ձայնով մը մահուան սա տը-
խուր հարսներգը յեղեցեց .
— Հէք աղջիկ հագիւ թէ եկած էիր
ու ահա կը մեկնիս . . . կեանքին անդ-
բանիկ ժպտները միայն ձանչցար ,

ու անխուսափելի տառապանքի ժա-
մուն է որ կը ննջես . . . Գնա պայ-
ճառութեան ու խաղաղութեան մէջ ,
փոքրիկ հոգի , քոյրը ծաղկանց ա-
նուշաբոյր հոգիին . . . Թոչնոց գեղա-
նուազ հոգիին . . . Վաղը , պարտէզիս
մէջ , քու բոյրդ իմ ծաղիկներուս բոյ
րին հետ պիտի չնջեմ , ու քու երգիչ
պիտի լսեմ ձայններուս ճիւղերուն վը-
րայէն : Դուն սրտիս պահպանը
պիտի ըլլաս , ու մտածման անփո-
խարինելի հրապոյրը :

Յետոյ ոտքի ելաւ , համոյր մը
գրոշմեց հանգուցեալին ճակտին ու
կրկին ձեռքերը տարածելով ապշած
ներկաներուն վրայ :
— Տէր ողորմես , ըսաւ :
Եւ այդ ժամկոչը չի պատասխանեց :
Եւ մտ , արձանացած , անցած դար-
ձածէն բան մը չէր հասկցած Ու ոչ
միայն չէր հասկցած , այլ նոյն իսկ
չէր գիտեր թէ ո՞ղջ էր , թէ այս
տունը , կիները , սրբատու փը , մեղմը ,
այս բոլորը երազ չէր արգեօք : Այն-

քան բուռն էր իր յուզումը , իր տակ-
նու վրայութիւնը , որ մոտցաւ հետե-
ւի աբբային որ կը մեկնէր , ու սե-
նեկին մէջ մնաց , խնթի աչքերով ,
բազուկները կախերի ու բերանը
մեծաբաց :

Հայրս դուրսը մեղի կը սպասէր :
— Բարի երեկոյ , Ժիւլ . ըսաւ , եղ-
բօրը քով գալով :
— Աստուծո . բարին , դո՞ւն ես :

Այո , ուշ է , և դուն հիւանդ ես ,
կուզե՞ս որ կտոքով երթանք :

— Երթանք , ըսաւ հօեղբայրս :
Հետեւեալ օրը հայրս ու մայրս
վանք եկան : Արքան իր անկողնին
մէջ պատկած էր ու ջերմէ կը նառա-
պէր : Առաւօտուն , սովորական ժա-
մուն ելլելու ուզած էր բայց նուազում
մը եկած էր վրան , սրտի խանոնուքի
հետ , ու զխու պտոյտ , ու մարմնոյն
մէջ միշտ դող զգալով , ստիպուած էր
անկողնի մնալ : Հայրս քնեց զայն
խնամքով ու հիւանդութեան ծան-
րութեան առջեւ չի կրցաւ իր ան-

կան և ապագան,
3.— Ինքնազարգացման միջոցներ հայթայթել ուսուցիչներուն:

4.— Վերջակէտել ապիկար ուսուցիչներուն պաշտօնավարութիւնը:

Տեղւոյս Ուսուցչ. մարմինը՝ իր Ժ. րգ. նիստին մէջ, օրակարգ ունենալով Ուսուցչ. Միութեան ամենակարեւոր և կենսական հարցը, միաձայն հասնութեամբ, տուաւ հետեւեալ որոշումները այս ազգօգուտ ձեռնարկը ի գլուխ հանելու համար, զպրօցական նոր տարեշրջանէն առաջ:

1.— Յուլիս ամսուան մէջ Ուսուցչ. ընդհ. ժողով գումարելի վառնա քաղաքը, «Պուլկարիոյ Հայ Ուսուցչ. Միութիւն» կազմելու համար:

2.— Հոն պատրաստել կանոնադրը, նաև միօրինակ ծրագիր մը պուլկարահայ վարժարաններու համար:

3.— Ուսուցիչները և ուսուցչուհիները պարտին անխտիր ներկայ գտնուիլ ընդհ. ժողովին՝ որուն գումարման օրը պիտի ծանուցուի երկրորդ շրջաբերականով:

4.— Ի նկատի ունենալով ուսուցիչներուն նիւթական վիճակը, անոնց ճամբու և ուրիշ անմիջական ծախքերը հայթայթելու համար՝ ամէն մէկ քաղաքի Ուսուցչ. Մարմինը պարտի սյգ մասին միջոցներ գտնել, սարքելով ներկայացում, նուազահանդէս, վիճակահանութիւն և այլն:

5.— Ընդհանուր ծախքերէն աւելցած գումարը յատկացնել յառաջիկային կազմուելիք Ուսուցչ. Միութեան սնտուկին:

Կը խնդրուի տեղւոյ Ուսուցչ. Մարմինէն, որ բարեհաճի իր կարծիքն ու դիտողութիւնները յայտնել Ռուսճուքի Ուսուցչ. Մարմնոյն մինչեւ Ապրիլ 20, որ պէսպի կարողանանք գործնական

հոգի վրայ դնել այս ազգօգուտ ձեռնարկը:

Յարգանք
Ուսուցչ. Մարմնի կողմէն
Ատենադպիր Ատենապետ
Մ. Պետրոսեան Ս. Ապագետան

ԹՈՒՐԿ-ՊԱՐՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԴԷՊԸ

Երկու երեք ամիս է որ կը ծեծուի թուրք-պարսկական սահմանադրութի միջադէպը իսկ սա վիշիւն օրերս, աւելի երբէք կը զբաղեցնէ քաղաքական աշխարհը: Գիտենք թէ Սուլթանի կառավարութիւնը արդէն սեղւոյն վրայ ուղարկած է 30,000 զինուոր, իսկ այս բանակին յառաջապահ զինուորները անվիճելի կերպով պարսկական հողաբաժնին վրայ գտնուող քանի մը ամրութիւններ պրաւած են: Երեւոյթը այնպէս կը ցուցնէ թէ՛ Շահին կառավարութիւնը, նմանապէս ձեռք կառնէ պէտք եղած միջոցները, իր քական բանակը յետս վանելու համար, ա. քրդաբնակ երկրէն, որ մինչեւ երէկ իրեն կը պատկանէր, ու կը մտածէ միանգամայն գրոհ տալ զէպի Պաղատաի նահանգը մինչեւ Պէրսպէս:

Ուստի կարծէ այս միջադէպին վրայ պատմական և աշխարհագրական հարեանցի ակնարկ մը նետել:

Այն սահմանափակ որ իրարմէ կը բաժնէ այս մահապաշտ կառավարութիւնները, 700 մղոն տարածութիւն մը ունի, սկսած Պարսից ծոցէն մինչեւ Արարատեան գաւառը Սահմանագծի վրայ գտնուող բնակչութիւնը մեծամասնութեամբ վրանաբնակ է: Երբեմն այս տարածութիւնը թատերավայրն է եղած պարսիկ շիրիթ ներու ու թիւրք սիւննի-նիստի միջև տեղի ունեցած արիւնահեղ կռիւններու: Այս ընդհարումները կրօնական պատերազմի երեւոյթն ունէին, որովհետեւ շիրիթ-նիստը շէին ճանչնար Պոլսոյ Սուլթանին կրօնական իրաւասութիւնը: Այս պատերազմները մերթ ընդմերթ կը մարէին բարեկամական համայնութեամբ ու կապերով: Քիչ յետոյ աւելի բուռն կերպով արծարծելու համար կարծես:

Առաջին իսկապէս խաղաղասիրական զանազանութիւնը, եթէ կարելի է

այսպէս ըսել, կնքուած է 1823 ին: Այս զանազորին մէջ յիշատակուած կայ, նախկին զանազորութիւններու տրամադրութիւնները, որով երկուստեք կը պայմանաւորուէին յարգել իրարու իրաւունքները, սակայն ասով վէճերը բնաւ վերջ չը գտան: Վերջապէս Անգլիա ու Ռուսիա համաձայնեցան ու միջամտեցին, պարսիկ ու թիւրք պետութեանց կռիւններուն վերջ մը աւելու համար, ու կնքուեցաւ 1897 թ Մայիսեան զանազորը, որ մինչեւ այսօր միաց անհետեւանք:

Այս զանազորին 8 յօդուածին համաձայն, երկու պետութիւնները պարտականութիւն կը ստանանք վերջ տալ վրանաբնակ ցեղերու յարձակումին ու աւազակութիւններուն: Երկու զանազոր պետութիւնները միանգամայն կը համաձայնէին թոյլատրել այս վրանաբնակ ցեղերուն, սրունց բնակավայրը որոշ չէ: միանգամ ընդ միշտ իրենց համար ընտրել բնակատեղի, ճանչնալով այս կամ այն պետութեան իշխանութիւնը: Իսկ անկախ ճանչցուած ցեղերուն, թոյլատրել հակելու այն կառավարութեան որուն կը պատկանին:

Թէհրանի ու Պոլսոյ իշխանութիւնները տեղւոյն վրայ յանձնարուած ուղարկեցին, սակայն ունայն աշխատութիւն:

Անգլիա ու Ռուսիա ստիպուեցան վերստին միջամտել, և այս անգամ պահանջեցին անգլիական ուսական, պարսկական ու թիւրքական խառն յանձնարարի մը կազմակերպումը նուազարկուածը:

Այս չորս կառավարութիւններու պատուիրակները անյայտագ գործի ձեռնարկեցին, 6 տարի շարունակ աշխատեցան, 1851էն մինչեւ 1857, մինչեւ որ աչքէ անցուցին 700 մղոնոց սահմանագիծը: Ասկէ ետքը աշխարհացոյց քարտեզին պատրաստութիւնը 8 տարի եւս տեւեց: Սակայն այս սահմանար տարուան տաժանակիր աշխատութիւնն ալ գործին օգուտ մը չը մատոյց: Անգլո-ուսական պատերազմները ինչ որ ալ ըրին չը կրցան համոզել երկու թշնամի բարեկամացած պատուիրակները, ու ամէն ինչ միաց այնպէս երեսի վրայ:

Սակայն այսքան աշխատութիւնէ ետքը, զէթ բան մը ըրած ըլլալու համար, քարտեզին վրայ նշանակեցին 30 մղոն տարածութիւն ունեցող չեզոք հողաբաժին մը, ու այս մասին արը

ուելիք որոշուած ձգեցին թէհրանի ու Պոլսոյ կառավարութիւններու կաժմբին:

Հետեւելով այս քարտեզին, շատ հեշտ է նշարել թէ երբեմնի այս յանձնարարութեամբ սահմանագծին վրայ գտնուող արեւմտեան գաւառները տուած է թուրքին, իսկ արեւելեանը պարսկին:

Ասկէ վերջը 1869 ին կնքուեցաւ զանազորութիւն մը, որուն նպատակն էր միայն պահպանել սղագու-գուտն:

Այս զանազորին 3 յօդուածը նշանակելի է. «վիճելի երկրներն երբ մինչեւ հարցին վերջնական որոշուած կը մնան աշխատավարութեան իշխանութեան տակ, որուն կը պատկանէր Սղագու-գուտն օրի սկզբու ընդհանրութեան առաջ, առանց սակայն իրաց այս կացութեամբ, որ պէս իրեն սեպհական երկիր համարուելու»:

Սակայն այսօրուան միջադէպը, կ'ոչնչացնէ այս զանազորին տրամադրութիւնները, եւ կը վերածէ ճիշտ այն դրութեան ինչ որ էր ասկէ 100 տարի առաջ:

Այս վիճելի հողաբաժնին վրայ տեղի ունեցած անցեալ շնչին զէպ մը առիթ կուտայ կարմիր Սուլթանին երազել թէ ամբողջ Գիւրտիստան, իր սիրելի համթախներու վաթանը, պէտք է պատկանի թուրքոյ, ու կը հրամայէ այս ամբողջ վիճելի հողաբաժինը գրաւել:

Հիմայ կիսալուսնի գրոշին պատկանող զինուորները, ոչ միայն 1869 թ զանազորով որոշուած վիճելի հողաբաժինը, այլ անվիճելի կերպով պարսկական հողին վրայ գտնուող Բաս-Օվաի ամրաւանն ալ գրաւած են:

Շահին կառավարութիւնը թրքական այս կամայականութեան զէպ, տակաւին ծանուցադրութիւն վրայն կը բողոքէ իր բողոքներուն ոյժ կուտան Անգլո-Ռուսական դեսպանութիւնները:

Իսկ այս բողոքներուն ի պատասխան, Պոլսոյ նախարարական խորհուրդը, անշուշտ Սուլթանին թելադրութեամբ թուրք բանակին գործառնութիւնը որոշուածով մը կը նուիրագործէ, անպատասխանի ձգելով պարսիկ դեսպանութեան տուած նոր ծանուցագիրը:

հանգստութիւնը սքողել:
— Ասանկ չըլլար, ըսաւ բայց ինչ մնաս քեզի եթէ խորհրդակցութեան համար պաշտօնակիցներէ մին հոս բերեմ:

— Ինչ պէտք կայ, պատասխանեց հօրեղբայրս: Ես կը զգամ արդէն որ ամէն ինչ կը քայքայուի կոր մէջս, թէ այլ եւս ապրելու երկար օրեր չունիմ... քաղճանքս այն է որ զիս իմ կամքիս համեմատ խաղաղօրէն մեռնիլ ձգեմ: Եթէ շատ տառապիմ, ջանա զիս միտքաբերել քիչ մը, այս է իմ բոլոր խնդրանքս:

Ու վշտագին մեղմադձութեամբ մը անկողնոց:

— Ի՞նչ մահս զուրկ է ո՞նէ կարե սքոթութեան: Տաժանելի է արդարեւ տեսնել հին տուններու քաղճամեայ ծառերու ու զանգակատուններու իյնալը... բայց ե՛ս, ոչ մէկը չեմ պատապարած, ոչ մէկուն պտուղ չեմ տուած... ոչինչ կրցած է հոգւոյս մէջ գեղեցիկ հաւատք մը, դեղեցիկ երգ ըր

թրթոցանել... Եթէ լաւ մեռնիմ, եթէ երթամ հանգիստ, առանց ապաշաւի, առանց ստեղծութեան, իմ մահս միակ բարիքը պիտի ըլլայ կենեմքիս: ու թերեւս անոր միակ քաւութիւնը:

Հոս ընդմիջեց, որովհետեւ կուրծքին ճնշումէն կը հեծէր. քանի մը վայրկեան վերջը վերսկսաւ:

— Կը փափագէի նաեւ որ անկողինս պատուահին տղջու փոխադրէին... Կը սիրեմ պարտէզս, կը սիրեմ իմ ծառերս, կը սիրեմ այս երկիրը, այս հսկայ երկինքը...

Հայրս խիստ յուզուած էր, մայրս պարտէզը կը դիտէր, առանց բան մը զգալու:

Ամբողջ չիչերը, մինչդեռ հայրս վանք գալով հիւանդը կը հուկէր: մայրս տան մէջ աչքէ կանցնէր մեր բոլոր սեւ գոյն հագուստները, լաւ տանտիկնոջ մը հանդարտ ու մանրակրկիտ խնամքով:

Մայրս, որ երեք օրէ ի վեր արբային սնարին քով կը սպասէր, գուրս

ելաւ: Ու ես, հօրեղբայրս հետ միմակ մնացի սենեակին մէջ: Հիւանդութիւնը բոլորովին աւերած էր անոր զէպը, իր անգո, թմաքիւններով նոր ուրդերէ՛ք քերած, փրօած էր անմիտ ու բոլորովին չոր մորթին վրայ: Զերմը անոր ցցուած ախտերը երկու ծիրանեգոյն պտուկներով կը բծաւորէր, ու իր խոշորացած աչքերը կը փայլէին, կապտացած շրջանակի մը մէջտեղ, արդէն իսկ գերմարդկային փայլով մը: Մերթ ընդ մերթ, իր զօղոջուն ձեռքերով զովացուցիչ ըմպելիքի աման մը կը տանէր շրթներուն ու իր թրծուն լեզուն քիմքին զարնուելով՝ տաժանելի ու անվերջ աղմուկ մը կը հանէր: Դժուար շնջառութիւն կը կատարէր: Մարմարէ սեղանի նվրայ զանազան սրուակներ համալսփօրէն շարուած դեղարանական հոտեր կարձակէին:

— Պղտիկ, ըսաւ հօրեղբայրս ինձի, գոցէ զուրը որպէսզի մարդ ներս չի մտնէ... և իմ մօտս եկուր... քեզի

բսելիք ունիմ, միայն քեզի, որովհետեւ զուր զիս էապէս սիրող միակ էակը եղար:

Այս խօսքերը տխուր քաղցրութեամբ մը արտասանուած, զիս յուզեցին, այնպէս որ չի կրցայ արցունքս զսպել, ու մէկէնմէկ սկսայ արտասուել:

— Մի լար, մի լար, հանդարտէ, միտքարեց զիս հիւանդը, ելիր բաժնուրէ:

Դրան նիքը դրի, ու անկողինն մօտեցայ: Հօրեղբայրս ժպտեցաւ երեսիս ու քանի մը վայրկեան մտածեց:

(Շարունակելի)



Սուրբ անը այնպէս կը կարծուի որ կուզէ գործը մինչև վերջը տանել նոյն իսկ ենթադրելի է թէ նա կուզէ անթիւն օգտուիլ իր սրբեցութիւնը հաւատացեալներու աչքին առջեւ բարձրացնելու նպատակով:

Սակայն, եթէ Պաղտատի նահանգը Պատարի ու Գէրպէլի կողմերը, ուր շիթականները բազմաթիւ են, բռնկելու ըլլան շատ սուղի կրնայ նստիլ Պոլսոյ ճիւղին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն կիմացնեն թէ Նիկիայ փաշա Մէլհամէի հրամանով անհամար ձերբակալութիւններ անցի կուենան թրքական բարձր շրջանակներու մէջ: Մէլհամէն կը ճգնի ու է գաւազութեան մը հետքը գտնել՝ Երիտասարդ թուրքերու ու քիւրտերու կողմանէ նիւթուած կառավարութեան դէմ: Նիկիայ փաշա Մէլհամէի քրտ տնօրինութիւնները Պոլսոյ թուրք բնակչութիւնը վերջին աստիճան մտատանջութեան մատնած են:

— Պոլսէն աւստրիական լրագրիչներու կը հեռագրեն՝ Պոլսոյ քաղաքական շրջանակներու մէջ տարածայնութիւն մը կայ, որուն համաձայն անցեալ շաբաթ, պարսկա—թրքական վիճելի հողաբաժնին վրայ, թուրք ու պարսիկ զօրքերու միջև ընդհարում մը տեղի ունեցած է, ուր թուրք զօրքը յաղթող հանդիսացած է: Այսու գրականապէս սա միայն ստույգ է թէ՛ Խոնէ շէրի մէջ զբոնուող պարսից մաքսատուներ թուրք զինուորները գրաւեր ու պարսիկները վաներ են անկէջ:

— Սուրբ անը հրաման ըրած է՝ Սինաի թերակղզիին մէջ, Թաւաթի շրջակայքը գտնուող երկիրը եզրագծական կառավարութեան տակ, Այսպէս կը վերջանայ Եգիպտական հարցը, որու մասին Բ. Դուռը կուզէր Անգլիոյ հետ հակաճառել ու գիւնադիտապէս շափուել:

— «Տայէ պանդի» տեսչութեան անդամներէն մին Դիար Զէնտէր Պոլսի հասած է: Կրտն թէ Զէնտէր ամենէն աւելի Պոլսոյ մէջ զբաղելու է Օբրաստիա—Սամսոն—Էրզրում երկաթուղւոյ մենաշնորհը ձեռք ձգել այսու միանգամայն պիտի զբաղի, այս առաջադրուած երկաթուղւոյ երկայնութեան վրայ գտնուող օսկւոյ հանքերու մենաշնորհը կորցել, այս հանքերը գտած է Անատուրի երկաթուղիներու երբեմնի երկրաչափներէն մին:

Հոս յիշատակելի է՝ եթէ երբէք Օբրաստիա—Սամսոն Էրզրում երկաթուղւոյ հարցը որոշուի, Ռուսիան իրեն կը վերապահէ առաջնութեան իրաւունքը այս մասին:

— Այս օրերս նախարարական խորհուրդը, օրակարգի գրած է թրքական նաւատորմի վերանորոգման կենսական հարցը: Առաջադրուած է յանձնել ձէնովախ Անուալա եւ Արմազոնի նաւերուն հինգ զրահաւորներու վերանորոգումը, սակայն այս գազափարի դէմ խօսիլ բողոքած է իրաւարարութեան նախարար Ապտուլրահման փաշան, և բաժնէ թէ՛ հին զրահաւորներէ՛ բան մ'ալ չըլլար ու այս նպատակով ծախսուած գումարները պարտապի կերթան: Ինչ որ յստի եղաւ յունա թրքական պատերազմի ժամանակ, Թուրքիոյ հարկաւոր են երեք շորս հատ զինուորական փոխադրանաւեր առնուազն ըսած է Ապտուլրահման փաշան իր խօսքը աւարտելով:

Ինչոր նախարարները համաձայն են ու համակարծիք գրտնուեր անոր յայտնած այս գազափարին:

— Բ. Դուռն կողմանէ ընդունուած Մակեդոնական պիւտճէն, հաստատուած է միանգամայն Սուրբ անը:

Այս հաշուեկշիռն համաձայն 2678000 լիւրա ելք իսկ մուտք միայն 1856000 լիւրա նախատեսուած է, որով 822000 լիւրա շափբաց մը կը մնայ: Բ. Դուռը կը յայտարարէ թէ՛ այս բացը գոցելու համար ինչք կարողութիւն չունի, նա մաքսային սակի 3/10 բարձրացումը շուսափոյթ կը պահանջէ:

— Մարը՝ Սուրբ անին 15 հատ Սիպիրեան շուներ նուիրած է:

Ռ Ո Ւ Ս Ւ Ա

Թաւրիկեան պալատի գրողաւանին մէջ, ուր տեղի պիտի ունենան կոստատարագվէնա Տուժաի նիստերը հրդեհ ծագած է թէ՛ Եւ մեծ զնա մը պատճառած չէ: Սակայն բաւական ժամանակ պէտք պիտի ըլլայ ամենահարկաւոր նորոգութիւնը ընելու համար: Թաւրիկեան պալատի այս կրակը տեսակ տեսակ կը մեկնաբանի: Սակայն նշմարելի է թէ՛ այս կրակը տեղի կունենայ ճիշտ այն ժամուն երբ սահմանադրական ազգավարականները կը շահին ընտրութիւնները, յաղթութիւն մը, որ Վիթէ-Տուրնոփոյի կառավարութեան համար փախազելի չէ: ասոնք նախամեծար կը համարեն որ Տուժաի առաջին գումարումը ըլլայ զուտ «Մուծիկեան Տուժա»:

Արդի նախարարական խորհուրդը՝ կուզէ կարելի եղածին չափ յետաձգել Տուժաի գումարումը իսկ երբ մարդ նկատի կառնէ նախաբայական այս նախագառութիւնը: «Թէ բաւական ժամանակ պէտք է նորոգութիւն»

ները ընելու համար՝ այն եզրակացութեան կը յանդի թէ՛ Թաւրիկեան պալատի հրդեհը պատահական չէ կարելի է նիւթագրել այլ քաղաքական:

— Խժէրի կառավարիչ և իսկի կառավարական խորհրդատու Սէրովը ումարով մը սպաննուած է: Սպաննիչը ձերբակալուած է:

— Պէրլինեան «Բոսդ» լրագրի թղթակիցը Իէհրանէն կիմացնէ թէ՛ կողկասէն Պարսկաստան գտնված շատ մը միւսիւլմաններ հակառուսական բուռն բրբառ կանդ կընեն, անոնք առուական շահերուն, Անգլիական ծածկահարքներէն աւելի կը զնստեն: Այս գաղթականներու ձեռքն է հիմայ Պարսկաստանի ամենակարեւոր թերթերը, և անոնց օգնութեամբ Ռուսիոյ դէմ մեծ կուր կը մղեն:

Այս լրագրիչներու ամենակարեւորներէն էլ կուրը «Խապիւլ—Մահտին» և «Ճէրիսէ—Նամ» միջին 70,000 բաժանորդ ունին, և մեծ ազդեցութիւն ունին Պարսկաստանի մէջ հոգեւորականութեան և երիտասարդութեան վրայ:

— Զօրավար Գուլօթաթիւնը, հիմայ կը բնակի իր մօր ագարակներուն մէկուն մէջ, նա առսաճարօտական պատերազմի վրայ մեծ երկատիրութիւն մը կը գրէ: Անոր գրութեան վերջին մասը առսական անյաջողութիւններու վրայ, նիւթական, բարոյական և գիտական տեսութիւններ պիտի պարունակէ:

— Գուրլանտիոյ մէջ բնակչութիւնը շատ յուզուած վիճակի մէջ է: անհամար ձերբակալութիւններ տեղի կունենան ամէն օր:

— Մայրագոյն Արեւելքի ուսական նաւատորմի վերջին մնացորդները, «Կրոմսայոյ» և «Ռոսիա» յաժանաւերը առջի օր Գիլէն գէպի Պաղիկեան ծովը անցած են:

— Մոսքովայի մէջ, կողպատեր են վանք մը: գողերը իւրացուցած են վանքին գանձարանին մէջ գտնուող 70,000 ռուպլին և շատ մը արժէքաւոր իրեր, մինչև այսօր կարելի չէ եղած անոնց հետքը գտնել:

Ի Տ Ա Լ Ի Ա

Նարոյի մօտ գտնուող վեսով անուն հրաբուխը բորբոքած է, և հետզհետէ սպառնալից երեւոյթ կառնէ: Հրաբուխը սոսկալի տեսք մը ունի: Նոր բացուած հրաբխային բերէն կրակ ու մոխիր կը ցայտէ: Հրաբուխին շրջակայքը գտնուող բնակչութիւնը խուռնեամ հաւաքողի մէջ կը փախչի: Թորթ Անունցիա քաղաքին հետ հեռագրական ու հեռախօսական

յարաբերութիւնները ընդհատուած են, այնպէս կը կարծուի թէ այս քաղաքը ոչնչացած է: Կիմացնեն թէ քանի մը հոգի արգէն մեռած ու վիրաւորուած է: Տեղ տեղ տունները կործանած են և կամ լավայէ հրդեհած: Խաղաւորը և թուրքի հին կէսգրչերին մեկնած են գէպի Նարոյի: Մոսքովայի նախարարութիւնը կուգա գտնուող Միլիերիական նաւատորմի վերահրաման տուած է Նարոյի երթուիլ և ենթակուրիլ Ասոգոյի գոլքին հրամաններուն: Նախարարներէն ոմանք արկածավայրը կերթան: Օթաճիանօ, Բոճճիօ, Մարինս և Ասմա աւանները բոլորովին գատարկուած են: Հազարներով գաղթականներ Նարոյի կը հասնին: Տեղացոյ մոխրային անձրեւի պատճառով քաղաքին շրջակայքը կը տիրապետէ խաւարը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Սլոնցիւրասի համաժողովի մասին, Բայխազակի մէջ, ընկերվարական երեսփոխան Պէպէլի խօսած ժամանակ, իշխան Պիւլովը ինքզինքը կորսունցնելով գետին ինկած է: Անոր վիճակը կը կալ ծուր թէ բաւականի ծանր է:

ՍՐ Լ Զ . ՍՍԷՏՆԵՆԷԻԷ

Պատիւ ունինք ծանուցանել Վառնայի արգոյ հասարակութեան որ, Զատիկի երեքօրեայ տոներուն լաւ ժամանց մը ընծայելու համար, այս առիդով Պոլսէն հանրաձայնօթ կատակերգակ Տէրիլօ, Սէրվիօի խումբը հրաւիրեցինք, ներկայացնելու համար Քրանսերէն և իտալերէն լեզուա խիստ զաւեշտական վօտվիւներ և կատակերգութիւններ: Երջեալ կատակերգակը վերջերս Պոլսոյ բեմին վրայ իր շունգալից համբաւովը, կատակերգութեան ճիւղին մէջ, Գօթլէնը յիշեցնելով—ամբողջ մամլոյ գովեստին առարկան եղաւ: Բացառաբար մի քանի ներկայացումներ տալու մեր առաջարկը ընդունած ըլլալուն, կը հրաւիրենք Վառնայի հասարակութիւնը օգտուիլ այս բացառիկ առիթէն:

Մտից տոմսակները այսօրուրնէ կը վաճառուին Օրահ «Պուլկա» թիւ Գին բէգէրվա 2 Քր. Ա. կարգ 1.50 Քր. Բ. կարգ 1 Քր.

Տնօրէնք

Միհրան և Հրանդ